ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2022 թվականի N 1094-Ա

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման հավելվածի 5-րդ և 6-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից մինչև 2026 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացի-ների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից մինչև 2024 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացի-ների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից սկսած մինչև 26 տարին լրանալը տարկետում տալ՝

1) Սիմոն Գևորգի Մարտիրոսյանին (ծնվ.՝ 1997 թվականի փետրվարի 17-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Հայկաշեն, 11-րդ փող., տուն 6, Էջմիածնի ՋԿ), ծանրամարտի 2019 թվականի Թաիլանդի Պատտայա քաղաքում կայացած մեծահասակների աշխարհի չեմպիոն և 2021 թվականի Տոկիոյում ամառային օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիր.

2) Նորայր Արմենի Հախոյանին (ծնվ.՝ 1997 թվականի հունվարի 31-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Բագրատունյանց փ., շ. 38/1, բն. 27, Շենգավիթի ՋԿ), հունահռոմեական ըմբշամարտի 2021 թվականի Նորվեգիայի Օսլո քաղաքում կայացած մեծահասակների աշխարհի առաջնությունում գրավել է 5-րդ տեղը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ